

1.3. *Գներ և սակագներ*

2003թ. հունվար-ապրիլին գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(%-ով նախորդ ամսվա նկատմամբ)

	Սպառողական գների ինդեքս <sup>1)</sup>	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս <sup>2)</sup>	Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում <sup>3)</sup>	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս <sup>4)</sup>	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս <sup>5)</sup>	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս <sup>6)</sup>
Հունվար	104.1	97.0◊	100.0	99.6	100.2	100.8
Փետրվար	98.5	105.7	100.3	100.2	102.5	99.5
Մարտ	99.5	100.0	100.0	100.6	100.0	100.6
Ապրիլ	102.0	102.5	100.0	100.0	98.3	98.6
Ապրիլը 2002թ. դեկտեմբերի նկատմամբ	104.2	105.7*)	100.3	100.4	102.3*)	99.7*)
2003թ. հունվար-ապրիլը 2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ	103.2	104.2	100.8	103.2	105.8	105.8

\*) 2003թ. ապրիլի և 2002թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:

<sup>1)</sup> Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

<sup>2)</sup> Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:

<sup>3)</sup> Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:


<sup>4)</sup> Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

<sup>5)</sup> Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքների իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

<sup>6)</sup> Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

**Գների, սակագների աճի տեմպերը 2002-2003թթ. հունվար-ապրիլին**

(%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ)



**Սպառողական գներ:** ՀՀ սպառողական շուկայում 2003թ. փետրվար-մարտին գրանցված 1.9% ընդհանուր գնանկմանը ապրիլին հաջորդել է 2.0% գնաճ, ինչը մեծապես պայմանավորվել է պարենային որոշ ապրանքատեսակների գների սեզոնային փոփոխություններով:


2003թ. ապրիլին մարտի համեմատ պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գներն աճել են 3.0%, ծառայությունների սակագները՝ 0.3%, իսկ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 0.1% գնանկում:

Սպառողական գների ինդեքսը 2003թ. ապրիլին 2002թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 104.2%, ինչը 0.8 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (103.4%): Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 106.0%, ոչ պարենային ապրանքներինը՝ 100.3%, ծառայությունների սակագներինը՝ 100.7%:

2003թ. հունվար-ապրիլին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 1.0%, ինչը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը 0.2 տոկոսային կետով (0.8%):

Սպառողական գների հավելաճը 1995-2003թթ. ապրիլին


(%-ով նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)



2003թ. ապրիլին 2002թ. ապրիլի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 102.7%, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 103.1%, ոչ պարենային ապրանքներինը՝ 103.0%, ծառայությունների սակագներինը՝ 101.7%, իսկ հունվար-ապրիլին 2002թ. հունվար-ապրիլի համեմատ՝ համապատասխանաբար 103.2%, 103.6, 103.4 և 101.8%:

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2003թ. հունվար-ապրիլին

(%-ով նախորդ ամսվա համեմատ)



**Արտարժութային շուկա:** 2003թ. ապրիլին նախորդ ամսվա համեմատ սպառողական շուկայում գրանցված 2.0% գնաճը ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.4% նվազումով: Ապրիլին 2002թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների և հաշվարկային փոխարժեքի հավելաճը կազմել է համապատասխանաբար 4.2% և 0.6%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է նմանատիպ միտում և սպառողական գների ու հաշվարկային փոխարժեքի հավելաճը կազմել է համապատասխանաբար 3.4% և 2.4%: ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը 2003թ. ապրիլին կազմել է 588.14 դրամ, ինչը 1.7% գերազանցել է 2002թ. ապրիլի համապատասխան ցուցանիշը (578.21 դրամ):

**Պարենային ապրանքների գներ:** 2003թ. փետրվար-մարտին գրանցված պարենային ապրանքների 3.2% ընդհանուր գնանկմանը ապրիլին հաջորդել է 3.3% գնաճ, ինչը հիմնականում ձկնամթերքի, մրգի, բանջարեղենի գնաճի արդյունք է:

2003թ. ապրիլին 2002թ. դեկտեմբերի համեմատ ձկնամթերքի ապրանքախմբում արձանագրվել է 37.5% գնաճ, ինչը 15.1 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (52.6%): Ապրիլին մարտի համեմատ ձկնամթերքի գնաճը կազմել է 52.3%, ինչը հիմնականում պայմանավորվել է «սիգ» տեսակի թարմ ձկան 60.5% գնաճով: Ապխտած ձկան գնաճը նշված ժամանակահատվածում կազմել է 40.7%: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում գրանցվել է ձկնամթերքի գնաճ՝ 15.9-92.5%, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Գյումրիում: Մայրաքաղաքում ձկնամթերքի գնաճը կազմել է 43.3%:

Մրգի ապրանքախմբում 2003թ. ապրիլին 2002թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 24.0% գնաճ, ինչը 0.4 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (23.6%): Ապրիլին մարտի համեմատ մրգի գնաճը կազմել է 17.1%: Նշված ժամանակահատվածում խաղողի, ադամաթզի, նարնջի, կիտրոնի գներն աճել են 1.0-20.1%, իսկ տանձի և խնձորի գները նվազել են համապատասխանաբար 5.4% և 2.5%: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում գրանցվել է մրգի 0.4-26.8% գնաճ (ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Երևանում):

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում 2003թ. ապրիլին 2002թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 40.3%, իսկ 2003թ. մարտի համեմատ՝ 6.1% գնաճ, ինչին մեծապես նպաստել է կաղամբի (26.0%), գլուխ սոխի (13.6%) գնաճը: Գագարի և կարտոֆիլի գնաճը նշված ժամանակահատվածում կազմել է համապատասխանաբար 4.5% և 2.0%, իսկ վարունգի, լոլիկի և սխտորի գները նվազել են 6.4-0.5%: Հանրապետությունում դիտարկված 6 քաղաքներում արձանագրվել է բանջարեղենի և կարտոֆիլի 2.6-13.8% գնաճ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Վաղարշապատում), իսկ մյուս 4 քաղաքներում՝ 2.9-0.1% գնանկում:

2003թ. փետրվար-մարտ ամիսներին գրանցված ձվի 25.6% ընդհանուր գնանկմանը ապրիլին հաջորդել է 6.1% գնաճ, ինչը պայմանավորվել է դիտարկված առավել խոշոր 4 քաղաքներում գրանցված ձվի 1.4-10.9% գնաճով: Հրազդան (Չարենցավան) և Եղեգնաձոր քաղաքներում գրանցվել է ձվի համապատասխանաբար 5.8% և 14.3% գնանկում, իսկ մյուս 4 քաղաքներում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

2003թ. ապրիլին 2002թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է մսամթերքի 4.7%, իսկ 2003թ. մարտի համեմատ՝ 2.3% գնաճ: Վերջինս մեծապես պայմանավորվել է ոչխարի (6.3%), խոզի (4.0%) և տավարի (3.8%) մսի գնաճով: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում մսամթերքի գնաճը կազմել է 0.9-4.8% (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Թալինում): Մայրաքաղաքում մսամթերքի գնաճը կազմել է 1.8%:

Շաքարավազի, կենդանական և բուսական յուղի, սուրճի, թեյի, կակաոյի, ոչ ոգելից խմիչքի գները 2003թ. ապրիլին մարտի համեմատ աճել են 0.2-0.6%:

Ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում 2003թ. ապրիլին մարտի համեմատ արձանագրվել է 0.3% գնաճ, ընդ որում, ոգելից խմիչքի գներն աճել են 1.0%, իսկ ծխախոտինը՝ 0.2%:

2003թ. ապրիլին մարտի համեմատ կաթնամթերքի, հրուշակեղենի, այլ մթերքի ապրանքախմբերում արձանագրվել է 0.9-0.1% գնանկում, իսկ հացամթերքի գները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(%)

	2003 թվականի			
	ապրիլը			հունվար-ապրիլը 2002թ. հունար - ապրիլի նկատմամբ
	2002թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. մարտի նկատմամբ	2002թ. ապրիլի նկատմամբ	
<b>Պարենային ապրանքներ</b>				
(ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	106.0	103.0	103.1	103.6
<b>Պարենային ապրանքներ</b>	106.7	103.3	103.4	104.4
հացամթերք	99.5	100.0	98.5	98.4
մսամթերք	104.7	102.3	102.4	102.4
ծկնամթերք	137.5	152.3	97.0	97.6
կաթնամթերք	97.2	99.1	96.4	97.9
ծու	83.1	106.1	89.7	96.5
կենդանական և բուսական յուղ	100.3	100.3	100.8	101.0
միրգ	124.0	117.1	129.3	132.9
բանջարեղեն և կարտոֆիլ	140.3	106.1	120.5	122.8
շաքարավազ	101.5	100.2	102.4	101.9
սուրճ, թեյ, կակաո	100.8	100.4	99.4	99.2
հրուշակեղեն	100.7	99.9	101.7	102.4
այլ մթերք	99.5	99.9	99.4	99.6
ոչ ոգելից խմիչք	101.6	100.6	102.5	102.1
Ոգելից խմիչք և ծխախոտ	100.0	100.3	100.4	96.9

**Ոչ պարենային ապրանքների գներ.** 2003թ. ապրիլին մարտի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում արձանագրված աննշան գնանկմանը հիմնականում նպաստել է ոսկերչական ապրանքների, հագուստի և կտորեղենի, կահույքի, վառելիքի, դեղամիջոցների, մշակույթի, գեղահարդարման ապրանքների, տեքստիլեղենի, լվացամիջոցների 0.7-0.1% գնանկումը: Գորգեղենի, շինանյութերի, գրենական պիտույքների գներն աճել են 0.3-0.1%, իսկ հետազոտվող մյուս ապրանքախմբերում նախորդ ամսվա համեմատ գրանցվել է գների անփոփոխ մակարդակ:

2003թ. ապրիլին մարտի համեմատ հանրապետությունում բենզինի գնաճը կազմել է 1.7%, իսկ դիզելային վառելիքի գինը նվազել է 1.6%: 2003թ. ապրիլին 2002թ. դեկտեմբերի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գնաճը կազմել է համապատասխանաբար 9.2% և 9.9%:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները

(%)

	2003 թվականի			
	ապրիլը			հունվար-ապրիլը 2002թ. հունար - ապրիլի նկատմամբ
	2002թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. մարտի նկատմամբ	2002թ. ապրիլի նկատմամբ	
<b>Ոչ պարենային ապրանքներ</b>	100.3	99.9	103.0	103.4
այդ թվում՝				
հագուստ և կտորեղեն	99.8	99.7	102.4	103.2
վառելիք	96.4	99.8	131.5	124.9
կահույք	100.5	99.7	100.8	101.7
գորգեղեն	103.4	100.1	103.8	103.9
տեքստիլեղեն	101.8	99.9	98.1	98.6
կենցաղային էլեկտրաապրանքներ	96.4	100.0	96.4	98.0
խոհանոցային սպասք	101.5	100.0	102.3	102.1
լվացամիջոցներ	100.4	99.9	100.1	99.7
շինանյութեր	99.1	100.1	99.1	99.4
այգեգործական ապրանքներ	99.0	100.0	96.2	96.5
դեղամիջոցներ	98.3	99.8	96.4	95.2
անձնական օգտագործման մեքենա- ներ և բենզին	108.3	101.3	115.1	114.8
մշակույթի ապրանքներ	98.9	99.8	99.6	100.1

	2003 թվականի			
	ապրիլը			հունվար-ապրիլը 2002թ. հունար - ապրիլի նկատմամբ
	2002թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. մարտի նկատմամբ	2002թ. ապրիլի նկատմամբ	
գրենական պիտույքներ	99.5	100.3	99.2	99.3
գեղահարդարման ապրանքներ	100.1	99.9	100.8	101.0
ոսկերչական ապրանքներ	115.2	99.3	121.6	119.6
անձնապիտո ապրանքներ	99.6	100.0	100.3	100.6

**Ծառայությունների սակագներ:** 2003թ. ապրիլին մարտի համեմատ հանրապետությունում արձանագրված ծառայությունների սակագների 0.3% հավելաճը հիմնականում պայմանավորվել է բուժսպասարկման՝ 1.1%, կապի՝ 1.0%, (կապված հանրապետությունում հեռախոսագրույցների թույլտվության կիրառման արդյունքում հեռախոսի ամսավճարի 3.1% հավելաճի հետ), տրանսպորտի՝ 0.8% (կապված միջքաղաքային տրանսպորտի ծառայությունների 1.0% հավելաճի հետ) ծառայությունների սակագների հավելաճով: Հանգստի կազմակերպման ծառայությունների ոլորտում սակագները նվազել են 0.1%, իսկ կենցաղային, բնակարանային-կոմունալ, մշակույթի, կրթության համակարգի, հանրային սննդի, իրավական ու բանկային ծառայությունների սակագները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ:

**Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները**

(%)

	2003 թվականի			
	ապրիլը			հունվար-ապրիլը 2002թ. հունար - ապրիլի նկատմամբ
	2002թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. մարտի նկատմամբ	2002թ. ապրիլի նկատմամբ	
<b>1 առայություններ, ընդհանուր</b>	100.7	100.3	101.7	101.8
<i>այդ թվում՝</i>				
կենցաղային	100.0	100.0	99.8	100.1
բնակարանային-կոմունալ	100.0	100.0	100.0	100.0
բուժսպասարկման	101.0	101.1	100.8	98.9
տրանսպորտի	101.8	100.8	102.1	102.1
կապի	101.6	101.0	110.3	112.9
մշակույթի	100.4	100.0	105.9	114.0
կրթության համակարգի	100.5	100.0	102.6	102.9
հանգստի կազմակերպման	98.5	99.9	99.1	104.3
հանրային սննդի	102.6	100.0	102.1	102.0
իրավական և բանկային	100.0	100.0	100.0	100.0

**Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները:** 2003թ. ապրիլին մարտի համեմատ հանրապետությունում դիտարկված 9 քաղաքներում արձանագրվել է սպառողական գների 0.7-2.5% գնաճ (անենաբարձր ցուցանիշը գրանցվել է Երևան և Վաղարշապատ քաղաքներում), իսկ ք. Կապանում սպառողական գների ընդհանուր մակարդակը մնացել է անփոփոխ:

Պարենային ապրանքների շուկայում 2003թ. ապրիլին մարտի համեմատ դիտարկված 9 քաղաքներում արձանագրվել է 0.9-4.3% գնաճ, իսկ ք.Կապանում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

**Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2003թ. ապրիլի 30-ի դրությամբ**

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
<b>ՀՀ, միջինը</b>	1223	1236	1336	656	427	266	176	274	138	335
<i>այդ թվում.</i>										
Երևան	1208	1263	1330	659	418	268	176	292	143	313
Գյումրի	1213	1214	1300	638	463	268	173	225	108	375
Վանաձոր	1200	1050	1266	643	413	251	170	213	115	341
Վաղարշապատ	1300	1250	1300	570	450	260	200	250	150	350
Թալին	1300	1250	1400	680	450	265	200	200	135	400
Դիլիջան	1300	1200	1400	700	450	270	200	250	150	350
Հրազդան, Չարենցավան	1300	1250	1350	670	400	260	165	280	140	300
Եղեգնաձոր	1200	1300	1350	650	400	260	180	300	200	400
Մարտունի	1200	1200	1400	700	500	270	120	250	95	500
Կապան	1180	1160	1460	662	430	272	230	300	180	350

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2003թ. ապրիլի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 6067 դրամ, ինչը 0.9%-ով գերազանցել է նույնաժամանակաշրջանի 2002թ. ապրիլի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը (6014 դրամ):

Հանրապետությունում դիտարկված 6 քաղաքներում 2003թ. ապրիլին մարտի համեմատ գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.6-0.1% գնանկում (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է Վաղարշապատ և Եղեգնաձոր քաղաքներում), ք. Մարտունիում՝ 0.2% գնաճ, իսկ մյուս 3 քաղաքներում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2003թ. ապրիլին մարտի համեմատ հանրապետությունում դիտարկված 4 քաղաքներում գրանցվել է սակագների 0.1-2.2% հավելաճ, իսկ մյուս 6-ում սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

**Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2003թ. ապրիլին 2002թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված քաղաքների**

(%)

	Սպառողական գների ինդեքսը	<i>այդ թվում</i>					ծառայությունների
		սպառողական ապրանքների	<i>դրանցից</i>			նշ պարենային ապրանքների	
			պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	նշ պարենային ապրանքների		
<b>ՀՀ, ընդամենը</b>	104.2	104.9	106.0	106.7	100.3	100.7	
<i>այդ թվում.</i>							
Երևան	104.4	105.3	106.5	107.4	100.3	100.5	
Գյումրի	103.4	103.1	103.6	104.1	100.6	105.1	
Վանաձոր	103.4	104.1	104.9	105.3	100.7	100.3	
Վաղարշապատ	104.2	105.2	106.4	106.8	100.0	100.0	
Թալին	103.8	104.6	105.7	106.3	100.2	100.2	
Դիլիջան	104.5	105.5	106.9	107.6	99.8	99.8	
Հրազդան, Չարենցավան	103.1	103.7	104.6	104.9	100.2	100.1	
Եղեգնաձոր	103.6	104.6	105.9	106.5	99.1	98.9	
Մարտունի	104.6	105.3	106.4	106.9	100.8	101.4	
Կապան	103.8	104.7	105.6	106.2	100.9	99.9	

**Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս:** 2003թ. ապրիլին 2002թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի 5.7% գնաճ, ինչը 4.2 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (1.5%):

**Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի (%)**

	2003 թ վ ա կ ա մ ի			2002թ. հունվար-ապրիլը 2001թ. հունվար-ապրիլի նկատմամբ
	ապրիլը		հունվար-ապրիլը 2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ	
	2002թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. մարտի նկատմամբ		
Ամբողջ արդյունաբերությունը	105.7	102.5	104.2	101.5
<i>այդ թվում</i>				
Էլեկտրաէներգետիկա	96.2	100.3	100.3	101.9
գունավոր մետալուրգիա	119.0	99.4	134.7	108.3
քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն	97.5	98.8	114.7	86.4
մեքենաշինություն	100.8	98.1	92.7	97.2
այլ արդյունաբերական արտադրություն (ոսկերչական արդյունաբերություն)	130.5	133.6	93.5	97.3
անտառային, փայտամշակման, թղթի-ցելյուլոզի արդյունաբերություն	85.3	81.2	111.1	104.1
շինանյութերի արդյունաբերություն	99.1	100.6	100.6	95.7
թեթև արդյունաբերություն	84.8	96.7	97.1	99.0
սննդի (ներառյալ ալյուրի ու համակցված կերերի) արդյունաբերություն	102.1	101.3	98.7	100.4
հրատարակչական գործերի արտադրություն	139.7	100.4	99.4	104.5

2003թ. ապրիլին 2002թ. ապրիլի համեմատ արձանագրվել է արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի 1.2% գնաճ, ինչը մեծապես պայմանավորվել է գունավոր մետալուրգիայի (40.7%), քիմիական, նավթաքիմիական ու քիմիադեղագործական (11.8%), թեթև արդյունաբերության՝ (9.3%) թողարկած արտադրանքի գնաճով: Նշված ժամանակահատվածում այլ արդյունաբերական արտադրության (ոսկերչական արդյունաբերության), անտառային, փայտամշակման, թղթի-ցելյուլոզի, մեքենաշինության, սննդի (ներառյալ ալյուրի ու համակցված կերերի), շինանյութերի արդյունաբերության և հրատարակչական գործերի արտադրության թողարկած արտադրանքի գները նվազել են 44.8-0.5%:

**Բեռնափոխադրումների սակագների ինդեքս:** 2003թ. ապրիլին 2002թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է տրանսպորտի բոլոր տեսակներով բեռնափոխադրումների սակագների 0.4% հավելաճ, ինչը 1.0 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (1.4%): Ապրիլին նախորդ ամսվա համեմատ արձանագրված բեռնափոխադրումների սակագների հարաբերականորեն կայուն մակարդակի պայմաններում երկաթուղային տրանսպորտում գրանցվել է սակագների 0.4% հավելաճ, ավտոմոբիլային տրանսպորտում՝ 0.6% նվազում, իսկ օդային և խողովակաշարային տրանսպորտում սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

2003թ. ապրիլին 2002թ. ապրիլի համեմատ տրանսպորտի բոլոր տեսակներով բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 102.3%, այդ թվում երկաթուղային տրանսպորտով՝ 102.3%, ավտոմոբիլայինով՝ 103.4%, օդայինով՝ 99.4%, խողովակաշարային տրանսպորտով՝ 102.4%, իսկ հունվար-ապրիլին նախորդ տարվա հունվար-ապրիլի համեմատ՝ համապատասխանաբար 103.2%, 103.4, 105.0, 99.6 և 103.2%:

**Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս:** 2003թ. ապրիլին 2002թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է գյուղատնտեսական մթերքի իրացման 2.3% գնաճ, իսկ նախորդ ամսվա համեմատ՝ 1.7% գնանկում: Վերջինս մեծապես պայմանավորվել է իրացման բոլոր ուղղություններով գյուղատնտեսական մթերքի 5.0-0.8% գնանկումով:

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2003թ. ապրիլին մարտի համեմատ բուսաբուծական մթերքի իրացման գնանկունը կազմել է 5.7%, ինչը հիմնականում բանջարեղենի 7.7% գնանկման արդյունք է: Նշված ժամանակահատվածում կերային մշակաբույսերի, մեղրի, մրգի իրացման գները նվազել են 4.9-2.2%, իսկ տեխնիկական և հացահատիկային մշակաբույսերի ապրանքախմբերում գրանցվել է համապատասխանաբար 1.4% և 10.3% գնաճ:


Գյուղատնտեսական մթերքի իրացման միջին գները ԶԶ-ում 1998-2003թթ. ապրիլին (դրամով)

	Չափի միավորը	1998	1999	2000	2001	2002	2003
Ցորեն	կգ	153	114	100	103	102	98
Գարի	- „,-	138	114	79	92	97	96
Լոբի	- „,-	297	399	310	365	368	397
Կարտոֆիլ	- „,-	133	115	64	94	129	137
Կաղամբ	- „,-	111	87	29	102	48	70
Գազար	- „,-	98	65	40	72	100	50
Գլուխ սոխ	- „,-	203	...	122	...	137	146
Խնձոր	- „,-	138	151	96	136	194	167
Տանձ	- „,-	275	200	100	136	180	200
Խաղող	- „,-	400	...	...	200	...	400
Ընկույզ (կեղևով)	- „,-	...	780	667	688	754	806
Մեղր	- „,-	1767	2349	2434	2762	2500	2124
Միս տավարի	- „,-	908	858	808	883	878	966
Միս ոչխարի	- „,-	1143	852	858	875	923	988
Միս խոզի	- „,-	1438	797	924	1122	956	941
Կաթ	լ	132	110	106	106	100	103
Մածուն	- „,-	171	182	169	171	177	173
Պանիր (յուղոտ)	կգ	958	882	767	805	796	779
Չուլ	հատ	51	43	40	40	42	42
Միամյա խոտեր	կգ	29	18	15	27	19	22
Բազմամյա խոտեր	- „,-	31	24	22	24	31	20

... \_ դիտարկված տնտեսություններում իրացում (վաճառք) չի կատարվել

2003թ. ապրիլին 2002թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է անասնապահական մթերքի իրացման 6.4% գնաճ, իսկ նախորդ ամսվա համեմատ՝ 0.1% գնանկուն: Ապրիլին մարտի համեմատ կաշվեհունքի, ձվի, կաթնամթերքի, բրդի իրացման գները նվազել են համապատասխանաբար 3.1%, 4.8, 4.6, և 38.6%, իսկ մսամթերքի ապրանքախմբում գրանցվել է 4.3% գնաճ:

Գյուղմթերքի իրացման գների ինդեքսները ԶԶ մարզերում 2003թ. ապրիլին ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի (նախորդ ամիսը =100)





2003թ. ապրիլին 2002թ. ապրիլի համեմատ գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը կազմել է 105.5%, այդ թվում՝ բուսաբուծական մթերքինը՝ 96.8%, անասնապահական մթերքինը՝ 109.3%, իսկ հունվար-ապրիլին 2002թ. հունվար-ապրիլի համեմատ՝ համապատասխանաբար 105.8%, 108.4 և 104.3%:

**Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներն ըստ մարզերի**

(%)

	Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը	
	2003թ. ապրիլին		2003թ. ապրիլին	
	2003թ. մարտի նկատմամբ	2002թ. ապրիլի նկատմամբ	2003թ. մարտի նկատմամբ	2002թ. ապրիլի նկատմամբ
<i>ԳՀ, ընդամենը</i>	98.3	105.5	98.6	107.9
այդ թվում.				
Արագածոտն	99.4	114.2	100.0	110.1
Արարատ	90.4	92.6	98.4	99.9
Արմավիր	95.1	96.9	106.7	111.6
Գեղարքունիք	100.6	114.0	100.5	108.5
Լոռի	93.6	102.0	101.6	107.8
Կոտայք	100.3	99.8	105.7	104.9
Շիրակ	100.3	99.0	101.0	108.4
Սյունիք	99.1	118.7	100.4	109.4
Վայոց ձոր	95.7	95.8	98.5	107.4
Տավուշ	102.9	104.7	94.9	105.2

2003թ. ապրիլին 2002թ. դեկտեմբերի համեմատ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գները նվազել են 0.3%, իսկ նախորդ ամսվա համեմատ՝ 1.4%: Վերջինս հիմնականում պայմանավորվել է շինանյութերի (33.6%), գյուղատնտեսական վճարովի ծառայությունների (10.6%), բույսերի պաշտպանության միջոցների (7.2%), գյուղատնտեսական մանր գործիքների (7.0%), մեքենասարքավորումների և պահեստամասերի (6.3%), սերմացուների և տնկիների (6.0%) գնման գների և սակագների նվազումով: Նշված ժամանակահատվածում էներգիայի և քսայուղերի, անասնակերի ապրանքախմբերում գրանցվել է համապատասխանաբար 0.8% և 0.7% գնանկում, իսկ պարարտանյութերի և անասունների ապրանքախմբերում՝ 1.7% և 11.8% գնաճ :